

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝ Պ. ԱՂԱԶԱՆՅԱՆԻ

2011Թ –Ի ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Արձանագրություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի ղեկավարի 2011թ-ի տարեկան հաշվետվության մասին

23.01.2012թ

գ. Ծաղկունք

2012թ-ի հունվարի 23-ին տեղի ունեցավ Ծաղկունք համայնքի ընդհանուր ժողովը՝

Նախագահությամբ՝ Ա. Ավագյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Դավթյանի

Ժողովին մասնակցում էր Գեղարքունիքի փոխմարզպետ պարոն Գ. Ստեփանյանը:

Օրակարգում՝ 1. Ծաղկունք համայնքի ղեկավարի 2011թ-ի տարեկան հաշվետվությունը:

(Ձեկ. համայնքի ղեկավար՝ Պ. Աղաջանյան)

Համայնքի ղեկավարը մասնավորապես նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ռացիոնալ գնահատելով համայնքի սոցիալ տնտեսական վիճակը՝ լուրջ ուշադրություն է դարձրել համայնքի սոցիալ տնտեսական խնդիրներին, բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման, հասարակական կարգի պահպանության, գյուղատնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանման, աղբահանության և այլ բնագավառներին:

2011թ-ի կազմված համայնքի բյուջեն ընդունելով որպես համայնքի զարգացման հիմք՝ լուրջ ուշադրություն է դարձրել եկամտային մուտքերի (գույքահարկ, հողի հարկ), տեղական տուրքերի հավաքագրման խնդիրների վրա՝ ղեկավարվելով եկամտային մուտքերի եռամսյակային, կիսամյակային և տարեկան համամասնությունները պահպանելու սկզբունքով: Հիմք ընդունելով բյուջեի մուտքերի հավաքագրումը՝ մեծ աշխատանք է տարվել համայնքի բնակչության հետ, որը տվել է իր արդյունքը: Հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ներքոհիշյալ թվային ցուցանիշները բնութագրում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համագործակցությունը:

Պլանավորվել էր ընդամենը եկամուտներ- 18489.6 հազար դրամ:

Փաստացի կատարվել է - 18566.3 հազար դրամ(98.8%):

Պլանավորվել էր սեփական եկամուտների գծով - 10139.8 հազար դրամ;

Փաստացի կատարվել է - 10216.5 հազար դրամ(100,8%)

Հողի հարկ - պլան՝ 7950,0 հազ. դրամ - կատարողական՝ 8541.8հազ. դրամ(107.4%)

Գույքահարկ- պլան՝ 901.0հազ. դրամ -կատարողական՝ 904.2հազ. դրամ(100.4%)

Վարձավճար- պլան՝ 1130.0հազ. դրամ – կատարողական՝ 506.6 հազ. դրամ(44.8%)

Տեղական տուրքեր – 158.8 հազ. դրամ – կատարողական՝ 198.9 հազ. դրամ(125.3%)

2011թ – ի բյուջեն փակել ենք վարչական մասով 979.0 հազ. դրամ պահուստային մնացորդով:

Ֆոնդային մասով՝ 5140.8 հազար դրամ:

- Հուղարկավորության նպաստ մահացածի ընտանիքին հատկացվել է 120.0 հազար դրամ:

1. Գյուղապետարանի միջոցներով ցանկապատվել է համայնքի գերեզմանոցը շուրջ 3կմ: Բարեկարգվել և ներկվել է զոհվածների հուշարձանի ցանկապատը:

2. Նախապատրաստական աշխատանքներ է տարվում 2-րդ գերեզմանոցը ցանկապատելու համար:
3. Համայնքը ապահովել ենք փողոցային լուսավորությամբ 2կմ:
4. Պետական միջոցներով կառուցվում է համայնքի խմելու ջրի ջրագիծը` 80մլն դրամ, որը ըստ նախագծի կազմում է շուրջ 130 մլն դրամ, որի համար շնորհակալ ենք մարզպետարանի և անձամբ մարզպետին:
5. Գյուղապետարանը մեր աշխատած ժամանակաշրջանում, այսինքն 3 տարի կատարում և գեակատարում է պլանները, որի արդյունքում բնակիչներին տրվում է ծնունդների և մահվան գումարներ: Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվում է դրամական օգնություն:
6. Շուրջ 5մլն դրամ նախկին տարիների պարտքերը մարվել է, այսօրվա վիճակով մնացել է 150 հազար դրամ:
7. Սիստեմատիկաբար կատարվում է աղբահանություն:
8. Համայնքի զարգացմանը վերաբերվող հարցերը հաճախակի քննարկվում է գյուղապետարանում` հանրապետության լավագույն մասնագետների մասնակցությամբ:
9. Համայնքն ունի` կարատեի, ֆուտբոլի, երաժշտության խմբակներ, որոնց ղեկավարները ժամանակին վարձատրվում են: Մոտ ժամանակներս կավելանան մի քանի նոր` ասեղնագործության, պարի խմբակներ:
10. համայնքը ունի կապի բաժանմունք, գրադարան և կահավորված բուժ կետ:
11. Այս ամենը կատարվում է այն դեպքում, երբ պետությունը համայնքին հատկացնում է տարեկան 6.5 մլն դրամ դոտացիա այն ել այսպիսի գյուղապետարանի շենքային պայմաններում:
12. Բարձր հիմքերի վրա է աշխատակազմի աշխատանքային կարգապահությունը:
13. Այս ամեն դրական ձեռքբերումները կատարվում է աշխատակազմի լավ աշխատանքի արդյունքում, որի համար ես, որպես համայնքի ղեկավար` շնորհակալ եմ:
14. Համայնքի բնակչության աճը խթանելու նպատակով 1 տարի է յուրաքանչյուր ծնված երեխայի համար հատկացվում է 360 հազար դրամ, որը շարունակական է 5 տարի ժամանակով: Այս հարցում դերը մեծ է «Դար» հիմնադրամի, որի շնորհիվ կառուցվում է դպրոց տանող ճանապարհը, գարնան բացվելուն պես սպասվում է կենտրոնում նոր շենք շինություններ կառուցելու:
15. Շինարարական աշխատանքների ընդացքում համայնքից աշխատում են շուրջ 30 մարդ բարձր աշխատավարձով:
16. «Դար» հիմնադրամը բավական մեծ աշխատանք է տարել դպրոցաշինության բնագավառում: Հիմնադրամի օգնությամբ փոխվել է համայնքի բնակելի շենքերի տանիքներ, կատարվել է ներգին հարդարման և ցանկապատների կառուցման աշխատանքներ, իսկ գարնաը ցանկացողների քանակը հասել է 30 և ավելին:
17. Համայնքի բնակիչներին անհատույց տրամադրվել է 50 հատ մեղվաընտանիք, յուրաքանչյուր ընտանիքին` 5 հատ:
18. 2012թ-ին յուրաքանչյուր անսվա հավաքագրման գումարը կազմում է շուրջ 1մլն դրամ: Հունվար ամիսը համարել կատարված:
19. Համայնքում չկան գողություններ, խուլիգանական արարքներ չեն կատարվում, համայնքը ապրում է իր արջև ծառացած խնդիրների լուծմամբ:
20. Պ-ն Մարզպետի անմիջական օգնության արդյունքում 3 մարդ գործուղումով ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, տրվել է անվճար բուժ օգնություն և դրամական օգնություն, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:
21. Համայնքի կենտրոնում հատկացվել է հողատարածք համայնքում կառուցելու «Հայփոստի» տիպային շենքի մասնաճյուղ:

Այս ամենի կողքին կան բավականին բացթողումներ և թերություններ

1. Համայնքը չուի ժամանցի կենտրոն և արարողությունների սրահ, իսկ համայնքի բյուջեով նշվածները կառուցելու, առայժմ նման հնարավորություն չկա, մնում է հարց բարձրացնել մարզպետարանի արջև հնարավորինս համայնքին օգտակար լինելու:
2. Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգման և վերաբացելու նպատակով խնդրել մարզպետ պ –ն Ն. Պողոսյանին՝ հարց բարձրացնելու կրթության և գիտության նախարարության առջև, մտցնելու 2012 -2015թթ ծրագրի մեջ:
3. Համայնքը չունի կուլտուրայի օջախ, Կենցաղի տուն, Գյուղապետարանի շենք:
4. Համայնքը ունի ոռոգման ջրի ընդլայնման խնդիր, որը կբարելավի գյուղացու սոցիալ տնտեսական վիճակը:
5. Համայնքում 30 հազար հատ ծառ պետք է տնկվի, գործընթացը բանակցությունների փուլում է:
6. Աշխատանք պետք է տարվի համայնքի վարելահողերի մշակելու հարցում, քանի որ մշակվում է ընդամենը 10 տոկոսը:
Ամփոփիչ խոսքով ելույթ ունեցավ ՀՀ Գեղարքունիքի փոխմարզպետ պարոն Գ. Ստեփանյանը:
Մասնավորապես նշեց, որ անցած երեք տարվա ընթացքում, երբ համայնքի ղեկավար ընտրվեց պարոն Աղաջանյանը համայնքում ամեն ինչ ընթանում է իր հունով՝ մասնավորապես
 - Մարվել է աշխատակազմի աշխատողների նախկին տարիների աշխատավարձի պարտքերը:
 - Կատարվում և գերակատարվում է բյուջեի պլանները, որը նախկինում չէր կատարվում:
 - Մեր շնորհակալությունն ենք հայտնում բարերարներին, որոնք մեծ գործեր են անում համայնքի համար:
 - 2011թ-ին համայնքի ղեկավարի անմիջական հետևողականության արդյունքում համայնքին տրամադրվեց 80 մլն դրամ գումար՝ համայնքի խմելու ջրագիծը կառուցելու համար:
Առաջարկեց համայնքի ղեկավարի 2011 թ - ի գործունեությունը գնահատել լավ:

Համայնքի ընդհանուր ժողովը
Որոշեց

1. Համայնքի ղեկավարի անելիքների մասին վերաբերյալ առաջարկությունները ընդունել ի գիտություն:
2. Համայնքի ղեկավարի 2011թվականի գործունեությունը գնահատել լավ:

Համայնքի ընդհանուր ժողովի նախագահ՝

Ա. Ավագյան